ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ

ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

2017թ. ապրիլի 19 **N 99-Ա**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 16 –Ի N 75-Ա ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Ապարանի զինվորական կոմիսար, գնդապետ Հ.Թանգամյանի 2017 թվականի մարտի 29-ի N 2/245 գրությունը՝ ***կարգադրում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետի 2017 թվականի մարտի 16-ի <<Ապարանի տարածքային զինվորական կոմիսարիատի կողմից 2017 թվականի ամառային զորակոչի 1990-1999թթ. ծնված քաղաքացիների բժշկական ստուգումը և զորակոչը անցկացնելու մասին>> N 75-Ա կարգադրությամբ հաստատված N 2 հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) <<Լ.Մովսիսյան >> բառերը փոխարինել <<Լ.Աթոյան>> բառերով:

Գ.ԳՅՈՌԱԼՅԱՆ